


ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարին համար	12
Տարեկան	6
Վեցամսեայ	6
Արսասանական համար տարեկան	15
Վեցամսեայ	8

Անտիկալի համար	3
Տարեկան	4.50
Վեցամսեայ	2.50

Մանուկան տղր առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ. է. Իրեն հետևի անգամներու համար 20 0/0 զեղչ կըր

Վառնայի համար ձևոքի 40 սանթիմ



W. 4. Mechtelstrasse
Vienna

Նախկին և իրավ զրկել համարագրութեան հասցեին.

Редакция на вѣстникъ
"Шаржумъ"
Варна
(Автиче)
R. P. Kallimacarian, Mechtelstrasse
arjourm"
Varna (Bulgarie)

Արսասանական համար
ձևոքի
() 20 ՍԱՆԹԻՄ ()
Պուշկարին համար
ձևոքի
() 15 ՍԱՆԹԻՄ ()

Գրութիւնք և տպարան

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂՄԵՎԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԻՏՄԱՐԱՆԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇՆԱԿԹ ՕՐԵՐԸ

«ՇՆՔԹՈՒՄ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՆԴԸ ԲԱԺԵԿԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԻ

ՋԵՎՈՅՑ

Կը խնդրենք մեր յարգոյ աշխատակիցներէն որ յօդուած գրելու առնեն ին բարեհաճին աչքի առջև ունենայ թերթիս ծաւալը եւ ըստ այնմ շարժին: Երկար յօդուածներ, որչափ ալ գեղեցիկ ըլլան, կը վնասեն թերթիս պարունակութեան շահեկան ըլլալուն, վասնզի վերջապէս թերթի մը հրատարակման անոր նիւթերուն զանազանութեանը մէջ կը կայանայ:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Պ. Լըռուա Պօլիէօ դարձեալ «Էօնօքէէն»-ի մէջ երկար յօդուած մը կը նուիրէ հայկական ու մասկիդոնական հարցերուն լուծմանը, որուն համար ասկէց առաջ եւրոպական համաժողովի մը գումարումը կը ջատագովէր իբրև միակ միջոց Արեւելեան խնդիրը վերջնականապէս փակելու:

Այս երկրորդ յօդուածով ան կուզէ աւելի դիւրացնել տէրութիւններուն գործը տարբեր առաջարկ մը ներկայացնելով:

Աստիկ այդ յոյժ շահեկան յօդուածին կարեւոր մասերը:

Պիտիւմը սճիւրներուն որոնք ամէն օր կը գործուին այն ժողովրդաց վրայ որոնց կեանքն ու ապահովութիւնը երաշխաւորած էր եւրոպա. խորապէս կը վրդովէ զիս: Աչքս առնելով զգայնօտ մը նկատուիլը, չեմ կրնար լուռ ու մունջ առկալ քստմնելի տեսիլքին կոտորածներուն որոնք դարձեալ կարեւոր են Հայաստանի և Մակեդոնիոյ լեռները:

Եթէ չենք կրնար բան մը ընել մարդասպաններուն մոլեռանդական կատաղութիւնը զըսպելու համար, գէթ անխոնջ կերպով անոնց բարբարոսութիւնները մատնանիշ ընելու և վեր առնելու ենք ստույգութեանը վարագոյրը որով կուզեն անոնք ծածկել իրենց ահաբեկի շահատակութիւնները: Բայց ի՞նչ է թէ բան մը չենք կրնար ընել եւրոպացի Բէնզիլի խորամանկ բնակչին

չոհերուն համար: Կարելի՞ է որ բնաջնջումի այս քաղաքականութեան հանդէպ եւրոպայի ինքիքը զինաթափ յայտարարէ կամ շատանայ մէկ քանի դիւանագիտական ունայն գիմումներով, ինչ, Պերլինի դաշնագիրը ստորագրող վեց մեծ տէրութիւնները ինքիքինքնին բուսական զօրաւոր չ'պիտի զգային Դրան և Սուլթանին յարգել տալու համար այդ դաշնագիրը:

Ճշմարտութիւնն այն է որ տէրութիւնները և նոյն իսկ եւրոպայի ժողովուրդները բաւական գիտակից չեն այն պարտականութիւններուն զորս ստանձնեցին Պերլինի մէջ:

Եւ միմիայն քրիստոնեայ մեծ տէրութիւններու և քաղաքակիրթ ժողովուրդներու իրենց պարտքը չէ որ եւրոպայի ազգերը կ'անտեսեն, ամէնուն ալ շահը կը պահանջէ որ, իրենց իսկ ապահովութեանը համար, Արեւելք վերստանայ իր բարեկարգութիւնն ու խաղաղութիւնը, վասնզի եթէ կեղեքումն ու կոտորածները տեսնեն հոն, Հայաստանի և Մակեդոնիոյ դէպքերը եւրոպայի խաղաղութիւնն իսկ վրդովելու վտանգը կը ներկայացնեն, և ոչ թէ հեռուոր վտանգ մը, անորոշ ժամանակի մէջ, այլ մտաւոր վտանգ մը որ կրնայ յանկարծ պայթիլ 1903ի գարնան:

Արեւելքի հարստահարեալները որոնց փրկութեան համար եւրոպական համաժողովի մը գումարումը կը մաղթենք, Պերլինի այդ դաշնագրէն իրաւասական հանգամանք մը կզգենուն որուն արժէքը չի կրնար ուրացուիլ, քանի որ եւրոպա տուաւ ատիկա իրենց: Այս նկատմամբ, Մակեդոնիոյ և Հայաստանի քրիստոնեաները, Ռուսմանիոյ հրէաները համանման գրութեան մէջ կը գտնուին, ամէնքն ալ հաւասարապէս կրնան իրենց պահանջները հիմնել կառնուար դաշնագրութեան մը և պայմանի մը վրայ, որ շատ նոր ըլլալով չի

կրնար անվաւեր նկատուիլ, շատ հանդիսա որ կերպով և շատ ստորագրութիւններով վաւերացուած ըլլալով թուրքիա և ուրիշ ոչ մէկ կառավարութիւն կը համարձակի անոր վաւերականութիւնը ուրանալ:

Արեւելքի հարստահարեալները ինչպէս կրնան արժեցնել այդ հանդիսուոր պայմանագրութիւնը, այդ իրաւասական հանգամանքը:

Ատիկա իրենք չեն կրնար ընել և ինչո՞ւ: Վասնզի ոչ մէկը ոչ միւսը պետութիւն մը կը ներկայացնէ. վասնզի ոչ մէկը ոչ միւսը իրաւասական անձնաւորութիւն ունի. վասնզի, մէկ լսօքով, դիւանագիտութեան առջև և միջազգային իրաւունքի առջև անոնք ստանձին գոյութիւն չունին. անոնք այնպէս են որ իբր թէ գոյութիւն չունենային, Հետեւապէս, ինչ ալ ըլլայ իրենց իրաւունքը, զայն պաշտպանելու յատկութիւնը չունին, իրաւաբանական ոչ մէկ միջոց ունին զայն արժեցնել տալու: Պերլինի դաշնագրին էն հանդիսաւոր և էն որոշ պայմանները իրենց ձեռքին մէջ մեռած տառ կը մնան: Իայց ինչ որ ոչ Մակեդոնիոյ քրիստոնեաները, ոչ թուրքիոյ հայերը, ոչ Ռուսմանիոյ հրէաները չեն կրնար իրենք իրենցմէ ընել, ուրիշներ չեն կրնար անոնց սեղը ընել: Եւրոպայի տէրութիւնները, մանաւանդ Պերլինի դաշնագիրն ստորագրողները, իրաւունք չունին պահանջելու թուրքիայէն կամ Ռուսմանիայէն իրենց յանձնառութեանց գործադրութիւնը:

Այս մասին ոչ ոք կը տարակուսի. եթէ մեզի պայցոյց մը պէտք ըլլար, մենք զայն պիտի գտնէինք այն ծանուցագրին մէջ զոր Միացեալ Նահանգացի արտաքին գործերու նախարար Պ. Հէյ ուղղեց եւրոպական պետութիւններու Ռուսմանիոյ հրէաներուն խնդրին աւթիւ: Միացեալ Նահանգացի կառավարութիւնը նըկատեց որ, եթէ ինք հանգա-

մանքը չունէր Ռուսմանիան հրաւիրելու որ յարգէ Պերլինի դաշնագիրը, այդ իրաւունքը կը պատկանէր այդ դաշնագիրն ստորագրող տէրութեանց: Ենթադրենք թէ Միացեալ Նահանգները Պերլինի դաշնագրին խմբագրութեանը և ստորագրութեանը մասնակցած ըլլային, կը կարծէք թէ միեւնոյն ձեռնարկին գիմէին, թէ շատանային գիմելով եւրոպական տէրութեանց, և թէ վարանած ըլլային ուղղակի Պիտիւմը զահի՞ծը հարկադրելու որ համակերպի 1878ի պայմանագրութեան: Այդ, ինչ որ չըրաւ ամերիկեան մեծ հանրապետութիւնը, վասնզի անիկա մասն չի կազմեր Պերլինի դաշնագրութեան—եւրոպական պետութիւններէն իւրաքանչիւրն ազատ է ընելու: Անոնք կրնան ընել զայն թէ՛ անհատապէս թէ՛ հաւաքապէս՝ ինչպէս Թուրքիոյ նոյնպէս Ռուսմանիոյ հանդէպ: Բնաւ հարկաւոր չէ որ անոնք համաձայն ըլլան, ոչ ալ միահամուռ գործեն: Այն բաները զորս Սուլթանէն չպիտի կրնային պահանջել Մակեդոնիոյ և Հայաստանի քրիստոնեաները, վասնզի միջազգային իրաւասական անձնաւորութիւն չունին, տէրութիւններէն իւրաքանչիւրը հանգամանքն ունի զանոնք պահանջելու տեղն ու տեղը:

Բայց, պիտի ըսեն ինձի, ինչպէս կուզէք որ այդ պահանջումները տեղի ունենան: Ձէնքի՞ զօրութեամբ: Եւ չէ՞ք տեսներ այդ օրինակ գործողութեան մը վտանգները, մանաւանդ երբ որ ան առանձնապէս տեղի ունենայ—Ոչ, պիտի ըսենք, զէնքի զօրութեամբ չէ: Մենք կը կարծենք թէ Պերլինի դաշնագրին 23, 44 և 61րորդ յօդուածները գործադրել տալու համար խընդիրը յարաւոյնելուն պէս կը բաւէ որ տէրութիւններէն մէկը կամ մէկ քանին աւելի պարզ և աւելի ապահով միջոց մը գիմեն, այն զոր խաղաղութեան բարեկամները կը շատագովեն,

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պուրջէջի աղքատաց գանձանակի խնամակալութիւնը կը խնդրէ մենէ ծանուցանել թէ այլ եւս յիշեալ խնամակալութիւնը նիւթապէս կարող չէ օգնել այն հիւանդներուն կամ աղքատներուն զորս բարեգործական ընկերութիւններ արտասահմանէն և արուարձաններէն կը զրկեն Պուրջէջ: Ինք հազիւ կարողութիւն ունի օգնելու Պուրջէջարեւակ աղքատներու՝ ձմրան եղանակին մէջ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԷՆԵՑՈՒԷԼԱՅԻ ԽՆԴԻՐԸ

Միացեալ—նահանգաց նախագահ պ. Թուրքլէյը առաջարկած ըլլալով Անգլիոյ, Գերմանիոյ և Իտալիոյ որ Վենեցուէլայի վեճը ենթարկուի Լահէի իրաւարարական ատենին, յիշեալ պետութիւնները պատասխաններ են խնդրելով նախագահէն որ իրաւարարի պաշտօնն ընդունի:

Այս հակառակարկը քիչ մը շփոթեցուցած է Ամերիկայի պահիճը, վասնզի այն դերը զոր տէրութիւնները կը խնդրեն պ. Թուրքլէյը ստանձնել մինչեւ աստիճան մը կրնար Միացեալ—նահանգներու պատասխանատուութիւնը հրաւիրել իրաւարարական վճարն գործադրութեանը մէջ: Անշուշտ ասիկա է դաշնակիցներուն ճարպիկ գիժումին նպատակակէտը, որ շատ կը տագնապեցնէ նախագահը, և սակայն Թուրքլէյը չէ մերժած իրաւարարի գերին այս առաջարկը և միակողմէ նախարարութիւնը կը պնդէ խնդրելու Լահէի դատարանին առջեւ տանելու իր առաջարկին վրայ:

Եթէ այս առաջարկը վերջնականապէս մերժուի, այն ատեն նախագահը պիտի ստիպուի ընդունիլ այդ դերը՝ արգիլելու համար որ կուրը չժանրանայ, վասնզի ան կրնայ յանգիլ նիւթական մեծ կորուստներու և առևտրական տակնուվրայութեան: Բայց անիկա չի ծածկեր թէ իրաւարարութիւնն ընդունելով, միեւնոյն ժամանակ պիտի ըլլար դատարար, երդուեալ և ոստիկանութեան գործակալ՝ բարոյապէս ստիպուած գործադրելու իր իսկ վճիռը, որ անշուշտ երկու կողմերէն մէկը դժգոհ պիտի ձգէ: Ասոր համար է որ պ. Թուրքլէյը խնդրելու Լահէի գատարանին նիւթայացնել կուզէ, բան մը որուն արդիւնքը պիտի ըլլար անեցնել սոյն գատարանին ազգեցութիւնը:

Նիւ—Եորքէն կը հեռագրուի

թէ Միացեալ—նահանգաց կառավարութիւնը լրացուցիչ պատասխան մը ընդունած է Գերմանիայէ, յայտարարու թէ յիշեալ տէրութիւնը տրամադիր է հրաժարիլ՝ Վենեցուէլայի իրմէ ներում խնդրելու իր պահանջէն, որուն համար ի սկզբան պնդած էր:

Գերման կառավարութիւնը կը հաւանի վեճին զլիսուոր կէտերը ենթարկելու Լահէի իրաւարարական դատարանին: Գերմանիոյ կայսրը անշուշտ տեղի տուած է Միացեալ—նահանգաց յատուած փափաքին ու աղքատած է Անգլիոյ ընթացքէն, որ նպատար է իրաւարարութեան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Յին միջոցին ուր թրքական վայրագութեանց լուրերը կը տուան Մակեդոնիայէն ու Հայաստանէն, անոնց գէշ տպաւորութիւնը մեղմելու և հակազդելու համար, տաճիկները հինցած ծթած մեթոսի մը կը գիմեն: Հեռագիրներ կը յերկրեն որոնք կը ծանուցանեն բռնութիւններ գործուած խեղճ թուրքերուն վրայ: Օրինակի համար, Պոլսոյ ճամբով սա երկու հեռագիրներ կը հրատարակուին:

Սերայեօ. — Աւստրիական կառավարութիւնը իր գրաւած նահանգներուն մէջ կը հալածէ իսլամական շարժման պետերը՝ գերիշխան ազգի մը քիչ վայել եղանակով: Անիկա բանտարկած է Շէրիֆ Էֆէնտի Առնափուտովի, իսլամ քովթէի գլխաւոր անդամներէն մէկը, ինչպէս նաեւ Տերովիչ պէյ Միրալէն—բազիք, թրաքիքի մեծ կալուածատէր, որ բանտարկուած է Էմինիցիի մէջ:

Հասքօօ. — Տեղւոյս հինգ իսլամ երիտասարդ որսորդներ դեկտ. 2ին սպանուեցան հոճի Մահմուտի զանդակին մէջ՝ գիւղէն երկու ժամ հեռու: Երեք ամիս առաջ այդ միեւնոյն պանդուկը թալլուած էր: Իսլամ երեւելիները աղերսագիր մը ներկայացուցած են Սոպրանիէի մէջ իրենց կրօնակից երեսփոխանին, ասիկա պիտի բողոքէ՝ անպատճառութեան դէմ որուն այս կարգի յաճախազէ պ ոճիներ կը հանդիպին: 1897ին տեղւոյս իսլամները ստիպուած էին երկու անգամ տուրք վճարել:

Սիւանիկի, Մանսթրի, Գոսովայի և Եաննայի կուսակալները շրջաբերական մը ընդունած են որ Սուլթանին մասնաւոր իրատէղը աղքատապէս կը հրամայէ քան որուն մէջ իրենց պատասխանատուութեան տակ ձերբա-

կալել ու բանտարկել բոլոր բարեկարգութիւնը խանգարողները, աւաղակներն ու մարգասպանները: Այս շրջաբերականին պատճէնը դեպքաններուն պիտի զըրկուի: Գուռը որ սնորհութիւններ պիտի հրատարակէ եղեր՝ հիմնուած դեպքաններուն խորհուրդներուն վրայ:

Պոլիս. — Զրոյց կը շրջի թէ տասնըվեց հայեր ուղեւորուս սահմանադրութեն անցնելու քահայաստան՝ չորս թուրք զինուորներէ սպաննուեր են Ալաշկերտի մօտ:

Յրանքֆուրթը Զայթունի կը հեռագրեն Պոլսէն. ուս դեպքան պ. Զինովիէվ պահանջեր է թուրք կառավարութեան Մակեդոնիոյ վերաբերեալ բարենորոգումները լրացնել անմիջապէս գործադրելով հետեւեալ տրամադրութիւնները. Թուրքիա այլ ևս գանձատու չհանէ մակեդոնական նահանգներու ստուկներուն վրայ, և Սելանիկի, Մանսթրիի և Սիլիպի նահանգաց համայնքներուն մէջ—որ քրիստոնեաները մեծամասնութիւն են—քրիստոնեայ անտառապահներ կարգէ: Այս վերջին պահանջումը ամենամեծ կարեւորութիւն ունի:

Պոլսէն «Տի Զայթ» թերթին կը հեռագրեն թէ Ռուսիոյ Զարին սոնախմբութեան առթիւ Պոլսոյ առջեւ գտնուող թրքական պահականա մը մերժեր է թնդանթի 21 հարուածներով ողջունել ուսական դրօշակը: Նոյնպէս «կաեաղէթ» ամբողջին հրամանատարը մերժեր է ամբողջին դրօշակը բարձրացնել ի պատիւ Զարին:

Այդ առթիւ պ. Զինովիէվ Սուլթանին բողոքած ըլլալով՝ Համիտ աղան անմիջապէս իր արտաքին և էերքին գործոց նախարարները զրկեր է դեպքանէն պաշտօնապէս ներդրութիւն խնդրելու համար և «կաեաղէթ» ամբողջին բոլոր մարդիկը պաշտօնանկ եղած են:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Երէկ Սօֆիա Պ. Բ. Բարավէլօֆի նախաձեռնութեամբ և Ս. Սիւնօղի նախագահին ներկայութեամբ ժողով գումարեր են զանազան կուսակցութեանց պետերէն պ. պ. Բարավէլօֆ, կէջօֆ, Տ. Բէթօֆ, Խ. Բէթօֆ և Թ. Իվանչօֆ, խորհրդակցելու համար իրենց բռնելիք գիրքին վրայ, երբ առիթը ունենան իրենց կարծիքները յայտնելու մակեդոնական խնդրի մասին՝ կոմս Լա. մատորֆի ներկայութեանը:

—Վիէնայի «Նայ» Յրայէ Բըրէսէն իրերթը խօսելով կոմս Լա.

մատորֆի Սօֆիա ընելիք ճամբորդութեանը մասին կըսէ թէ Պուլկարներուն կողմէն կրկին յիշատակագիր պիտի մատուցուի, որ արտայայտուած պիտի ըլլայ պուլկարական փափագը թէ Մակեդոնիոյ համար պէտք է պուլկար կուսակալ մը նշանակել:

ՄԱԿԵՊՈՒՆԱ

Բ. Գուռը նոր ստիպողական հրամանագիրներ խրկեր է Պուլկարներէ բնակուած նահանգներու զինուորական և քաղաքական իշխանութիւններուն, որպէսզի չզուշտան բռնութիւններ ի գործ դնելէ ժողովուրդին վրայ յիշատակականներ և զէնքեր փնտռելու առթիւ, յայտարարելով թէ եղած անկարգութիւններուն համար պատասխանատու պիտի համարուին տեղական իշխանութիւնները:

Եւրոպայի բոլոր թուրք դեպքանները հրահանգ ստացած են իրենց կառավարութեանէն, որ Մակեդոնիոյ մէջ բարենորոգումներ գործադրելու մասին պետութիւններէն իրենց տրուած խորհուրդներուն պատասխաններ սամտքով թէ տրուած բարենորոգումները այլևս գործադրուելու վրայ են և թէ անոնց յաջողութիւնը ապահովուած է:

Պոլսէն տրուած լուրի մը համաձայն Միթրօվիցայի ուսասկան հիւպատոսին պիտի ընկերանան եղեր երկու ծառաներ, երկու դիկնապահներ: Ճիշդ չէ եղեր վերջերս տարածուած այն լուրը թէ ուս զինուորներ պիտի ընկերանան հիւպատոսին: Իր պահովութեան հոգը պիտի տանան է. Գուռը:

ՆՈՒԱԳԱՅԱՆԴԵՍ

Զինուորական քլիպին մէջ տար Եգոստինոսեան, վաղը կիրակի գիշեր, ժամը 8 1/2 ին նուագահանդէս մը պիտի տայ որուն կը մասնակցին նաեւ Օրվորթինէ և տար Ն. Սմիթլանեանց:

Կը յուսանք թէ՛ նուագի սիրահարները առիթը չի պիտի փախցնեն և պիտի փութան ներկայ գտնուիլ մեր ազգակիցներէ՛ սարքուած այն երեկոյթին:

ОТГОВОРНИКЪ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“, Варна